

«Երկու միջավայրներ, կ'ըսե՛ ինք, ազդած են վրաս.– Վենետիկը իր Թիցիանով եւ Ֆլանսորը իր Վանտիքներով: Առաջինին գոյները եւ վերջնայն բարբարոս իրապաշտութիւնը յօրինած են վրձինս՝ զոր սնափառութիւնն ունիւմ թաթխած ըլլալու միմիայն հայրենի հողին որդան կարմիրին մէջ եւ ծովածուփ արեանը: Իսկ բաղձանքս է ապագային մարդերուն նուիրել հզօր երգ մը՝ որ հայրենիքը ինծի պէս արարած մը ծնած ըլլալուն գոնէ չզղջայ»¹⁵:

Սպասելով այդ իր ուխտած երգին, մենք բանաստեղծէն այնքան հզօր երգեր ունինք արդէն, պատանեկան *Սարսուռներէն* մինչեւ երիտասարդութեան *Հեթանոս երգերը*: Վերլուծելով Վարուժանը իբր բանաստեղծ՝ պիտի հանդիպինք անոր մէջ մէկ քանի գիծերու.–

Վարուժան, հակառակ իր արուեստագէտի թոհչքին եւ բանաստեղծի հերարձակ հոգւոյն, անօռմալ չէ, ինչպէս այնքան ուրիշ բանաստեղծներ են:

Մեր շատ մը բանաստեղծներէն կը տարբերի նաեւ անով որ լուրջ պատրաստութիւն ունի եւ բազմակողմանի հմտութիւն:

Վարուժան նաեւ տիրացած է հայերէն լեզուին եւ իր բոլոր նրբութիւններուն, աւելի քան որեւէ բանաստեղծ:

Իր քնարը միակողմանի չէ ուրիշներուն պէս, եւ Վարուժան ամէն լար կը թրթռացնէ միեւնոյն յաջողութեամբ, ու զարմանալու չէ, երբ պատանեկան ներշնչումներու *Սարսուռներէն* ետք, ան ձեզ տուաւ *Յեղին սիրտը*, ու հիմա ալ *Հեթանոս երգերը* թրթռացնելէ ետք, վաղը ձեզ երգէ *Հացին երգը*¹⁶:

Վարուժանի քնարը, հազուադէպ բացառութիւն մեր գրականութեան մէջ, տիեզերական է, արուեստէն եւ գեղեցկութենէն զատ չունենալով ուրիշ մտահոգութիւն:

Վարուժանի երգերը, նոյնիսկ իրենց ամէնէն առարկայական էջերուն մէջ, երբեք կեղծ չեն հնչէր, բանաստեղծի հոգին ցոլացած ըլլալով ամէնուն վրայ ալ:

Վարուժան, առաջին դասականօրէն իրապաշտ բանաստեղծը մեր մէջ, նոյն իսկ կիրքին ամէնէն հրապուրիչ